ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-725[1]-21.02.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-242-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «որպես հարկային մարմնին վճարվող գումարներ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Ամփոփաթերթ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը: Գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ բնապահպանության նախարարություն N 1/01.2/10205-15 09.02.2015թ.	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման 1. <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում	Ընդունվել է ի գիտություն:	

	շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա: 2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա: 3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում: Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:		
ՀՀ արդարադատության նախարարություն N 01/14/950-15 09.02.2015թ.	ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 1. Օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: 2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: 3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: 4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: 5. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի		

	հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում: 6. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ 1/ նախագծի վերնագրում անհրաժեշտ է «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով, քանի որ նախագծով մեկ փոփոխություն է նախատեսված:	Ընդունվել է ի գիտություն:	ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկի համաձայն նախագծում կատարվել են լրացուցիչ փոփոխություններ:
	2/ Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «հունիսի 1-ի» բառերը փոխարինել «հունիսի 29-ի» բառերով՝ նկատի ունենալով «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	7. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:	Ընդունվել է ի գիտություն:	
	8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 6-րդ և 7-րդ կետերին:	Ընդունվել է ի գիտություն:	
	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 1. Օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: 2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի		

	դրույթներին: 3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: 4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: 5. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:		
	6. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «հունիսի 1-ի» բառերը փոխարինել «մայիսի 14-ի» բառերով՝ նկատի ունենալով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	7. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:	Ընդունվել է ի գիտություն:	
	8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 6-րդ և 7-րդ կետերին:	Ընդունվել է ի գիտություն:	
	ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի առնչությամբ	Ընդունվել է ի գիտություն:	
	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու		

	մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն N ԱԱ/ՀՄ-2-3/836-15 09.02.2015	Եզրակացություն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997թ. հունիսի 1-ի ՀՕ-118 օրենքում և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության 2001թ. հունիսի 1-ի ՀՕ-195 օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997թ. հունիսի 1-ի ՀՕ-118 օրենքում և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության 2001թ. հունիսի 1-ի ՀՕ-195 օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 271 և 28-րդ	Ընդունվել է ի գիտություն:	

	հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն: Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա: Նախագծերը՝ ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն չեզոք ազդեցություն. բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն չեզոք ազդեցություն:		
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն N ՍԿ/ՀԾ-2/576-15 10.02.2015թ.	<<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> (այսուհետ՝ Նախագիծ 1) և <<Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> (այսուհետ՝ Նախագիծ 2) ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկում ենք հետևյալը. 1.Նախագիծ 1-ի և Նախագիծ 2-ի վերնագրերում համապատասխանաբար <<փոփոխություն>> և <<փոփոխություններ>> բառերից հետո լրացնել <<և լրացում>> բառերով: 2. Նախագիծ 1-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. <<<Հոդված . Օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետը <<մասերի>> բառից հետո լրացնել <<0106 41 000, 0106	Չի ընդունվել: Չի ընդունվել:	Նախագծում կատարվել է միայն փոփոխություն:

	90 00, 0601 10 900 0, 0602 90 300 0, 5305 00 000 0 ծածկագրերին դասվող ջերմոցներում օգտագործվող անհրաժեշտ միջոցների, տնկանյութի, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ջերմոցների>> բառերով: 3. Նախագիծ 2-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. <<Հոդված . Օրենքի 1-ին հոդվածում՝ 1)ցանկը 0106 19 100 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝ <<0106 41 000 Մեղուներ, 0106 90 00 Այլ միջատներ>>, 2)ցանկը 0301 10 100 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ <<0601 10 900 0 Այլ կոճեղզներ, պալարներ, արմատապալարներ, պալարակոճեղզներ, հիմնարմատներ>>, 3)ցանկը 0602 10 100 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ <<0602 90 300 0 Բանջարեղենի մշակաբույսեր, մորու և ելակի բույսեր>>, 4)ցանկը 5203 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ <<5305 00 000 0 Հնդընկույզի, արաբիկայի մանրաթելեր (մանիլյան կանեփաթել կամ Musa textilis Nee), ճենակ շեփի (չինական եղինջ) և այլ բուսական մանածագործական մանրաթելեր՝ այլ տեղում չընդգրկված և չներառված, անմշակ կամ մշակված, բայց չմանած, այդ մանրաթելերի քոլքերը և մնացուկները (ներառյալ մանվածքային մնացուկները և փխրացրած հումքը), 5) ցանկը 9301 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ <<9406 00 310 0 Ջերմոցներ>>: 4. Նախագիծ 1-ի և Նախագիծ 2-ի հիմնավորումների. - <<1. Անհրաժեշտությունը>> բաժնի վերջում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. <<Հիմք ունենալով ՀՀ կառավարության ծրագրի դրույթները ժամանակակից ջերմոցային տնտեսությունների խթանման ուղղությամբ, անհրաժեշտություն է առաջացել ջերմոցային կոնստրուկցիաների, տնկանյութի և այլ միջոցների ներմուծումն ու իրացումն ազատել ավելացված արժեքի	Ընդունվել է: Ընդունվել է ի գիտություն:	Նպատակահարմար է առաջարկվող փոփոխությունը դիտարկել առանձին նախագծի շրջանակներում: Կատարվել է համապատասխան փոփոխություն: ԱԱՀ-ի 15-րդ հոդվածում փոփոխություն կատարելու դրույթին առնչվող առաջարկությունները հիմնավորման մեջ չեն ներառվել:

	հարկից:>>, - <<2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները>> բաժնի վերջում ավելացնել նոր նախադասություններ հետևյալ բովանդակությամբ. <<Ջերմոցային տնտեսությունների համար կոնստրուկցիաները, տնկանյութը և այլ միջոցները հիմնականում ներմուծվում են և դրանց ավելացված արժեքի հարկով հարկումը խոչընդոտում է ժամանակակից ջերմոցային տնտեսությունների զարգացմանը: Առաջարկ-վող օրենսդրական փոփոխությունը կնպաստի ժամանակակից ջերմոցային տնտեսությունների տարածքների ավելացմանը:>>, - <<4. Կարգավորման նպատակը և բնույթը>> բաժնի վերջում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. <<Ջերմոցային տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում:>>, - <<6. Ակնկալվող արդյունքը>> բաժնի վերջում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. <<Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների զարգացում, բուսաբուծական մթերքների գների սեզոնային տատանումների մեղմում, արտահանման ծավալների ավելացում, նոր աշխատատեղերի ստեղծում:>>:		
ՀՀ առողջապահության նախարարություն ԱՄ/06.1/1296-15 10.02.2015թ.	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՋՈՂԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների	Ընդունվել է ի գիտություն:	

	կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:		
ՀՀ ֆինանսների նախարարություն 01/2-4/2796-15 12.02.2015թ.	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ Նախագծերով առաջարկվում է սահմանել, որ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով նախատեսված ապրանքները Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում առանց ԱԱՀ-ի վճարման՝ անկախ այդ ապրանքների ներմուծման համար մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ սահմանված լինելու հանգամանքից: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ մինչև 2015 թվականի հունվարի 2-ը օրենքով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծումը, մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունենալու պայմանով, նույնպես ազատված էր ԱԱՀ-ից՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների, ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:	Ընդունվել է ի գիտություն:	